

ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի շնորհավորական ուղերձը ՀՀ անկախության 20-ամյա հոբելյանի առթիվ

21.09.2011

Արմավիրի մարզի հարգարժան բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, հիրավի այս տոնը մեր ազգային պետական տոնացույցում ամենակարեւոր ու նվիրական տոնն է: Սա ազգային հպարտության տոն է:

Սա մի տոն է, որն ունենալու փափագը կրել են մեր ժողովրդի բոլոր սերունդներն առանց բացառության, եւ որն ունենալու բախտն ու պատիվը մեզ վիճակվեց:

Ժողովուրդների կյանքում միշտ լինում են այնպիսի վճռական պահեր, երբ անհրաժեշտությունը ծնում է հզոր գաղափարներ իրականացնող ուժեղ անհատներ, որոնք ի գործու են ժողովրդին առաջնորդել:

Եվ աստվածային բարեհաճություն է, երբ ժամանակը, ժողովուրդը եւ առաջնորդները գտնում են իրար: Դա եղավ մեզ` հայերիս հետ, 20-րդ դարի վերջին:

Այն դարի, որի սկզբին կասկածի տակ էր դրված հայի` որպէս տեսակի գոյությունն ընդհանրապես:

Նույն դարի վերջում` համախմբված ազգային գաղափարների շուրջ, կազմակերպվեց, բռունցքվեց հայ ժողովուրդը, եւ 1991թ. սեպտեմբերի 21-ին ձեռք բերեց այսուհետ ազատ, անկախ ապրելու իր իրավունքը:

Այն չնվիրվեց մեզ, ինչպէս թվում է շատերին, այլ նվաճվեց բազում մարդկային կյանքերի գնով, բազում զրկանքներով, նեղություններով ու կորուստներով, ոգեւորություններով ու հիասթափություններով, կյանքի ու կացութաձեւերի արագ ու սրբնթաց, հաճախ ավերիչ փոփոխություններով, հին գաղափարների ու արժեհամակարգերի կործանմամբ ու նորերի ձեւավորմամբ:

Այսուհետ այլեւս անկախությունը հայ ժողովրդի բախտն է ու ճակատագիրը, անկախությունը նրա պատասխանատվությունն է ու ուժը, անկախությունը նրա ուժն է եւ իրավունքը` արդեն անքակտելի ու հավերժական, քանզի արտահայտված է համազգային կամքով ու նվաճված է համազգային ցանկությամբ: Հավերժ փառք մեր նորանկախ պետությանը: